1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԿԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ....4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ....5

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ....27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ....28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ....30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ....31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի հանրային հեռուստաընկերության հիմնական նպատակը իր գործունեության ողջ ընթացքում առաջին հերթին եղել եւ շարունակում է լինել որակյալ եւ դիտարժան եթեր մատուցելը: Լինելով հանրային հեռուստաալիք՝ Առաջին ալիքը խնդիր ունի ապահովել այնպիսի եթերացանց, որն իր դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական հիմնական առաքելությանը զուգահեռ կկարողանա հետաքրքրական լինել հանրության ամենատարբեր շերտերի համար, ներկայացվող հաղորդումները պետք է նպաստեն կրթված, ուժեղ, հայրենասեր սերունդ ձեւավորելուն:

Հենց այս հիմնական մոտեցումներով եւ շեշտադրումներով է ձեւավորվել Առաջին ալիքի 2015 թվականի եթերացանցը:

Արդեն սիրված եւ իրենց կայուն տեղը եթերում պահպանած հաղորդումների կողքին, Առաջին ալիքն իր հեռուստա դիտողներին ներկայացավ նաեւ նոր հաղորդումներով՝ քաղաքական, հասարակական, սոցիալական, մշակութային, մանկական հիմնական ուղղություններով: Հանրայինի եթերում յուրաքանչյուր ոք իրեն հետաքրքրող եւ իր տարիքին համապատասխան հաղորդումներ պետք է կարողանա գտնել: Քայլեր ձեռնարկվել հատկապես երիտասարդներին եւ մանուկներին հետաքրքրող նոր հաղորդումների պատրաստման ուղղությամբ:

Շարունակվեց հատուկ ուշադրություն դարձվել եթերում ներկայացվող ֆիլմերի ընտրությանը եւ ցուցադրությանը: Լինելով հայկական առաջատար հեռուստաընկերություն՝ Առաջին ալիքն իր գլխավոր առաքելությունն է համարում հանրությանը ներկայանալ որակյալ ֆիլմերով, այդպիսով հնարավարություն տալով իր հեռուստադիտողներին եթերի միջոցով հաղորդակից դառնալ ֆիլմարտադրության արդի տենդենցներին, ինչպես նաեւ ֆիլմերի միջոցով ծանոթանալ համաշխարհային կինոարտադրության հետաքրքիր եւ նոր երեւույթներին:

Ֆիլմերի ցուցադրության իրավունքները Հանրային հեռուստաընկերությունը շարունակեց ձեռք բերել միայն այն կազմակերպություններից, որոնց պատկանում են տվյալ ֆիլմերի ցուցադրման իրավունքները՝ դրանով հայկական հեռուստաշուկայում տվյալ գործընթացը օրինական հիմունքներով իրականացնելու նախադեպ ստեղծելով: Առաջին ալիքի համար շարունակվեց խիստ կարեւոր եւ գերխնդիր լինել օրինական ճանապարհով տվյալ ֆիլմերի ձեռքբերման հարցը, քանի որ միայն այդ կերպ է հնարավոր օրինակ ծառայել մյուս հեռուստաընկերությունների համար, դաշտը մաքրել ֆիլմերի ապօրինի ցուցադրություններից, ստեղծել առողջ մրցակցություն:

Ժամանակակից պահանջներին համապատասխանող հեռուստաընկերություն ունենալու համար միայն անսահման նվիրումը, ստեղծագործական միտքը, հետաքրքիր գաղափարները բավական չեն: Այդ ամենը լավ եւ որակով հեռուստադիտողին ներկայացնելու համար տեխնիկական լավ հնարավորություններ, անհրաժեշտ տեխնիկական հագեցածություն է պետք:

Հեռուստաեթերի բովանդակային փոփոխություններին զուգընթաց, 2015 թվականին եւս շարունակվեցին անհրաժեշտ քայլել ձեռնարկվել տեխնիկական որակի բարձրացմանը միտված:

Բացի վերոնշյալ ստեղծագործական եւ տեխնիկական փոփոխություններից, կարեւորվել է նաեւ Ընկերության աշխատակիցների հարմարավետության, ինչպես նաեւ շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը 2015 թվականին շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության եւ հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել եւ օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ ինչպես ՀՀ տարածքում, Արցախում, այնպես էլ արբանյակային հեռարձակման միջոցով նաեւ ՀՀ տարածքից դուրս:

2015 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում եւ սահմանված պահանջներին համապատասխան պատրաստել եւ հեռարձակել է թեմատիկ տարբեր ուղղություններով հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարել հանրության տարբեր շերտերի եւ սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները եւ ապահովել տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը:

2015 թվականի ընթացքում ՀՀ տարածքում Առաջին ալիքի եթերում հեռարձակվել են 8,734 ժամ, իսկ ՀՀ տարածքից դուրս՝ 8,733 ժամ ընդհանուր ծավալով հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորեւ բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների եւ ծավալների:

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	«ԱՌԱՋԻՆ» ԱԼԻՔՈՎ ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ (ԺԱՄ)	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԼԻՔՈՎ ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ (ԺԱՄ)
1	ԼՐԱՏՎԱԿԱՆ. ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ	621	983
2	ՔԱՂԱՔԱԿԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ	1.482	2.129
3	ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	2.073	1.479
4	ԿՐԹԱԿԱՆ. ՄԱՆԿԱՊՏԱՆԵԿԱՆ	594	318
5	ԳԻՏԱԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ	844	1.021
6	ՄԱՐԶԱԿԱՆ	313	253
7	ԵՐԱԺՇՏԱԿԱՆ	886	860
8	ՀԱՎԱՐՏԱԼԻ-ԺԱՄԱՆՑԱՅԻՆ	1.472	1.428
9	ՀՈԼՈՎԱԿՆԵՐ. ԱՅԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ	449	262
10	ԸՆԴԱՄԵՆԸ	8.734	8.733

Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալների տեսակարար կշիռները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են Գծապատկեր 1-ում և Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 1



Գծապատկեր 2



ԻՍԿ ՀԻՄԱ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ԵԹԵՐՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ:

ԼՐԱՏՎԱԿԱՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ»

«Առաջին լրատվական»-ը Հանրային հեռուստատեսության ամենօրյա գլխավոր լրատվական ծրագիրն է, որը համակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում եւ աշխարհում տեղի ունեցող հրատապ եւ ուշագրավ իրադարձությունները: Բացի «Առաջին լրատվական»-ի երեւանյան կենտրոնակայանից, թղթակցություններ են ստացվում ինչպես ՀՀ բոլոր մարզերից, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից, Ջավախքից, Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Դոնի Ռոստով), Ամերիկայի Միացյալ Նահանգներից (Լոս Անջելես, Վաշինգտոն), Ֆրանսիայից, Գերմանիայից եւ եվրոպական այլ երկրներից:

«Առաջին լրատվական»-ի կիրակնօրյա թողարկումը համակողմանիորեն ներկայացնում է շաբաթվա կարեւորագույն իրադարձությունները:

«ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ»

Լրագրող Նվեր Մնացականյանի ամենօրյա հարցազրույցների շարքն է քաղաքական դաշտի, գիտության, մշակույթի ու հանրային կյանքի տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ օրվա հրատապ հարցերի վերաբերյալ:

«ԱՌԱՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ»



Հաղորդաշարը ներկայացնում է տարադրամի փոխարժեքները, բորսային նորությունները, ինչպես նաեւ լուսաբանում է ՀՀ տնտեսության եւ միջազգային տնտեսական ոլորտի ուշագրավ իրադարձությունները:

«ՏԵՍԱՆԿՅՈՒՆ»

«Տեսանկյուն»-ը Գեւորգ Ալթունյանի հեղինակային վերլուծական ամենօրյա ծրագիրն է, որի շրջանակում ընտրվում է օրվա մեկ հրատապ թեման եւ մեկնաբանվում անսպասելի դիտակետից՝ հրապարակախոսական սուր շեշտադրումները համադրելով թեթեւ եւ սուր ոճի հետ:

«ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»

Լրատվական այս հաղորդաշարը ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի քառօրյա նիստերի ընթացքը, որտեղ պատգամավորները եւ խմբակցություններն իրենց հատկացված ժամանակահատվածում հանդես են գալիս հայտարարություններով, բարձրացնում սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային եւ այլ հարցեր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ»

2015 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում սկսել է հեռարձակվել «Հանրային օրակարգ» հասարակական-քաղաքական նոր հաղորդաշարը, որը վարում է հեռուստահաղորդավար Գևորգ Ալթունյանը: Հաղորդաշարը հարցազրույցի ժանրում է, որի շրջանակում հաղորդավարը շաբաթվա ընթացքում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձությունների մասին զրուցում է հրավիրված հյուրի հետ:

«ԵՌԱՆԿՅՈՒՆԻ»

2015 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում նոր ձեւաչափով սկսեց հեռարձակվել «Եռանկյունի» քաղաքական հաղորդումը: Եռանկյան կողմերի կարծիքների բախումից Հանրայինի եթերում ծնվում է ճշմարտությունը: Հաղորդման ընթացքում հաղորդավար Արմեն Աշոտյանը քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային, կրթական, ազգային եւ միջազգային տարբեր թեմաները քննարկում է քաղաքական, հասարակական, մշակութային եւ այլ բնագավառի գործիչների հետ՝ Հանրայինի եթերում հասարակությանը հաղորդակից դարձնելով ամենահրատապ թեմաներին:

«ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ»

Ամեն շաբաթ խորհրդարանի աշխատանքները Հանրային հեռուստաընկերության եթերում լուսաբանում է «Խորհրդարանական շաբաթ» թողարկումը, որի ընթացքում նաեւ խորհրդարանական խմբերն ու խմբակցությունները կանոնակարգված ժամանակահատվածում լայն հանրության համար բարձրաձայնում են իրենց համար տեսանելի խնդիրներն ու առաջարկությունները:

«ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ»

«Հրապարակում» հաղորդաշարի նպատակն է ամեն շաբաթ Հանրային հեռուստաընկերության եթերում հասարակությանը ներկայացնել ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ եւ հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն հաղորդելով անցած շաբաթվա ընթացքում կառավարության ընդունած կարեւորագույն որոշումների, քննարկումների մասին: Միաժամանակ ներկայացնում է գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները:

«ԱԳՐՈԺԱՄ»

Հաղորդաշարը վեր է հանում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրները, ագրարային քաղաքականությունը հասանելի է դարձնում հանրությանը, օգնում գյուղացիական տնտեսություններին աշխատանքները կազմակերպելու հարցում: Սա պետական լիազոր մարմնին հարց ուղղելու նոր հարթակ է ֆերմերների համար, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն ստանալու հնարավորություն: Հաղորդաշարը պատրաստվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ:

«ՁԻՆՈՒԺ»

Բանակային կյանքի բազմաբովանդակ լուսաբանմամբ հագեցած «Զինուժ» ծրագիրը ներկայացնում է բանակի շաբաթվա առօրյան, միջազգային ռազմաքաղաքական շփումները. մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարժություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-հրամանատար փոխհարաբերություններ, պատմամշակութային նյութեր, ինչպես նաեւ անդրադարձ բանակի անցած հերոսական ուղուն:

«02»

«02» հաղորդաշարի գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության եւ հրապարակայնության սկզբունքների վրա: «02» հաղորդաշարը նպաստում է հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, ներկայացնում է օպերատիվ նկարահանումներ դեպքի վայրից, հանցագործությունների բացահայտումներ, օպերատիվ հետախուզական և քննչական միջոցառումների իրական առանցքներ, շաբաթվա քրեական քրոնիկոնը, առանձին հանցատեսակներով թեմատիկ հաղորդումներ, մասնագիտական վերլուծություններ եւ եզրակացություններ:

«ՄԱՐՏԻԿ»

Հաղորդաշարի ընթացքում ներկայացվում է բանակի առօրյան: Ամեն անգամ հաղորդման հերոս է ընտրվում մշակութային-հասարակական հայտնի գործիչ կամ պարզապես որեւէ զինվորի ծնող: Նրանք այցելում են զորամաս, զինվորների հետ ճաշում, մասնակցում մարտական եւ ֆիզիկական պատրաստվածության դասերին, ծանոթանում այն զենքին եւ զինատեսակին, որին տիրապետում է հաղորդման հերոսը, և զորավարժարանում օգտագործում այն:

«ԱԶԱՏ ԳՈՏԻ»

«Ազատ գոտի» թոք-շոուն ազատ հարթակ է, որտեղ քննարկվում են հասարակական եւ սոցիալական բոլորայն հարցերը, որոնք հանրության ուշադրության կենտրոնում են, հրատապ են ու լուծման կարիք ունեն: Տաղավարում հասարակական, քաղաքական գործիչներն ու պետական պաշտոնյաները հաղորդավար Էրիկ Անթառանյանի օգնությամբ հարցը դիտարկում են յուրաքանչյուրն իր տեսանկյունից, իսկ լրագրողական հետաքննությունը ցույց է տալիս, թե ո՞րն է իրականությունը, ո՞վ է թերացել, ո՞վ է պատասխանատուն:

«ԲԱՐԴ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ»

Յուրաքանչյուր երկուշաբթի Տիգրան Դանիելյանը ներկայացվում է բարդ հարցերն ու փորձագետների եւ հյուրերի օգնությամբ փորձում գտնել դրանց ոչ հեշտ, բայց անհրաժեշտ լուծումները: Անհոգ կիրակիին հաջորդում է «Բարդ երկուշաբթին»՝ մի հաղորդում, որի ուշադրության կենտրոնում մարդն է՝ պարզ քաղաքացին, ով միշտ չէ, որ կարողանում է գտնել իրեն հուզող խնդիրների լուծումը: Լրագրողական յուրահատուկ հարթակ, ուր խոսում, լսում ու ներկայացնում են ամենակարևորը:

«ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼՐԱԳՐՈՂ»

Հաղորդաշարի շրջանակում Ալելիտա Չիլինգարյանն ու Սոնա Աբրահամյանը վեր են հանում ոչ միայն հասարակության սուր խնդիրները, այլեւ առանձին անհատների ունեցած խնդիրները տվյալ հասարակության մեջ: Բարդ սոցիալական հարցերի վերաբերյալ լրագրողական հետաքննությունները հնարավորություն են տալիս հասկանալ իրականությունն ու խնդրին նայել բազմակողմանիորեն:

«ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ»

«Հույժ գաղտնի» նոր հեռուստանախագիծը դետեկտիվի սիրահարների համար է, ուր տեղ են գտել հայկական հատուկ ծառայությունների կողմից հետաքննվող առանձնահատուկ դեպքերը՝ լրտեսություն, դավաճանություն, մաքսանենգություն, շանտաժ եւ այլն: Փաստագրական հաղորդում է, որի յուրաքանչյուր մասը լույս է սփռում իրական կյանքից վերցված, հայտնի եւ աղմկահարույց դետեկտիվ որեւէ պատմության վրա՝ լուսաբանելով նաեւ այդ ասպարեզի լեգենդար անհատների դերը:

«ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ»

Այս հաղորդումով է բացվում «Առաջին» ալիքի հեռուստատեսային աշխատանքային օրը: Մեկ հաղորդման մեջ առկա են միանգամից մի շարք ժանրեր՝ հարցազրույց, սյուժե, ակնարկ, լրատվություն, ռեպորտաժ: Նպատակն է հեռուստադիտողին հաղորդել օրվա ռիթմը, զուգահեռաբար ներկայացնել կենցաղային օգտակար խորհուրդներ և նախորդ շաբաթվա կարևոր իրադարձությունների համատեքստում զրույցի հրավիրել մարդկանց, ովքեր անկաշկանդ մթնոլորտում հակիրճ բացատրում են այս կամ այն իրողության հանրային նշանակությունն ու ակնկալվող արդյունքը: Թեմաները բազմազան են՝ արվեստ, շոու-բիզնես, նորաձևություն, սպորտ, առողջապահություն և այլն: Հաղորդավարները՝ Լիլիթ Մուրադյանը, Վահե Խանամիրյանը, Արման Մարգարյանն ու Հերմինե Ստեփանյանը:

«ՆՎԻՐՅԱԼՆԵՐ»

Հաղորդաշարը նվիրված է արցախյան գոյամարտին եւ նրա հերոս մասնակիցներին: Անդրադարձ է արվում մեր հաղթանակը կերտած շատ ու շատ մարդկանց՝ զինվորից մինչեւ գեներալ: Հեռուստադիտողին ներկայացվում է ոչ միայն ազատամարտիկի, զինվորի ու հրամանատարի ճանապարհը, այլ նաեւ պատերազմում բժիշկների, հոգեւորականների ու այլոց ունեցած կարեւոր ներդրումը: Հաղորդաշարի հերոսներն են այն մարդիկ, ովքեր չվախեցան կռվել ու մեռնել հանուն հայրենիքի: Կան հազվագյուտ դրվագներ մարտերից, որոնց մասին հիշում ու պատմում են ականատեսները: Հաղթանակի ու հաղթողների մասին երկու տասնամյակ անց պատմում է վավերագրող Ցվետանա Պասկալեւան:

«ԴԵՊԻ ԱՐՑԱԽ»

Հաղորդաշարի յուրաքանչյուր թողարկումը ներկայացնում է այսօրվա հյուրընկալ Արցախի կյանքի որևէ ոլորտ և բացահայտում դրա ամենահետաքրքիր մանրամասները:

Ինչո՞վ է հայտնի Արցախը, ու ի՞նչն է առ այսօր մնում ստվերում, ինչո՞վ է ապրում այսօրվա երիտասարդությունը, և ի՞նչն է մտահոգում ավագ սերնդին: Արցախի լեգենդներն ու իրական պատմությունները ներկայացվում են ականատեսների աչքերով:

«ՉԱԿԵՐՏՆԵՐ»

Չակերտներ, որոնք դեռեւս չեն բացվել, հարցեր, որոնք դեռ չեն ստացել պատասխաններ. Արթուր Բախտամյանի հեղինակային հաղորդումը բացում է բոլոր չակերտներն ու ստանում պատասխաններ՝ բացահայտելով հյուրին նաեւ այն կողմերից, որոնք մինչ այդ փակ էին: Ի՞նչ են նախընտրում

կարդալ եւ դիտել, ի՞նչ վախեր ունեն եւ ի՞նչ չիրականացված ցանկություններ, ու ի՞նչ է այսօր պակասում Հայաստանին:

«ՄԵՐՈՆՔ»

«Մերոնք» հեռուստանախագիծը պատմում է տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցների մասին: «Մերոնք» ծրագիրը ծանոթացնում է հայ հեռուստադիտողին սփյուռքում ապրող մեր հայրենակիցների հետ, որոնք պատմում են իրենց կյանքի, գործունեության եւ այն երկրի մասին, որտեղ այժմ ապրում են:

«ՁԱՎԱԽՔ՝ ԼԵՌՆԵՑԻՆԵՐԻ ՕՐՐԱՆ»

Հաղորդաշարը նպատակ ունի աշխարհասփյուռ հայերին ներկայացնել մի դրախտավայր, որի անունն է Ձավախք: Շառլ Ազնավուր, կարդինալ Աղաջանյան, Լուսինե Զաքարյան, Վահան Տերյան, Ջիվանի, Հովհաննես Քաջազնունի, Վարդգես Սուրենյանց, Հակոբ Կոջոյան. նրանք մեծանուն ջավախցիների մի փոքր մասն են միայն: Հաղորդաշարը պատմում է նրանց մասին, ովքեր ապրել ու արարել են ի նպաստ հայ ազգի: Վաղ միջնադարի բերդեր ու անառիկ պարիսպներ, Ախալքալաք բերդաքաղաք, բյուր սրբավայրեր, չքնաղ անտառներ և մոգական աղբյուրներ ու իհարկե՝ դրախտային Փարվանա լիճը: Այս ամենը և ավելին ներկայացվում են հաղորդաշարի ընթացքում, որի նկարահանումներն իրականացվում են ոչ միայն Ձավախքում, այլև աշխարհի բոլոր այն մասերում, ուր տանում են ջավախցիների հետքերը:

«ԱՐՎԵՍՏԱՆՈՑ»

Անկաշկանդ ու մտերմիկ մթնոլորտ, անկեղծ զրույց, որն ավելի շուտ հիշեցնում է ստեղծագործական, քան ուսուցողական պրոցես. վարպետության դաս է վարում ճանաչված ու սիրված արվեստագետներից մեկը... Յուրաքանչյուր հաղորդում սկսվում է այն վարելու համար հրավիրված Վարպետի բլից հարցազրույցով: Երիտասարդական լսարանի առջեւ ներկայացնելով իրենց մտքերն ու փորձը՝ փոքրիկ գաղտնիքներ են բացահայտում մշակույթի տարբեր ասպարեզներում հաջողության հասած արվեստագետները: Հաղորդման ավարտին նրանք պատասխանում են մասնակիցների հարցերին:

«ԱՐՎԵՍՏԱԿԻՐՆԵՐ»

Այս խորագրի ներքո ստեղծվել են վավերագրական երկու ֆիլմաշարեր, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 12 ֆիլմից: Հեռուստաֆիլմերը, որ նախատեսված են լայն լսարանի համար, ներկայացնում են մեր ազգային մշակույթում նշանակալի հետք թողած, ճանաչված անհատներին, նրանց, ովքեր սիրված են հայրենիքում, և ում համբավը դուրս է եկել Հայաստանի սահմաններից: Ունենալով պատմողական բնույթ՝ ֆիլմերը նաեւ որոշակի ինտրիգ են պարունակում, քանի որ հեղինակները ներկայացնում են ոչ թե ֆիլմի հերոսի կատարյալ կերպարը, այլ մարդուն՝ իր ուժեղ ու թույլ կողմերով, ստեղծագործական փնտրտուքներով ու տարակուսանքներով, որին, անշուշտ, խորթ չեն նաեւ մոլորությունները:

«ԱՐՏԿԱՆՈՆ»

«Արտկանոնը» բաղկացած է մի քանի բաժիններից՝ շաբաթվա մշակութային իրադարձությունների ազդագիր, հանրային հնչեղություն ունեցող մշակութային որեւէ

թեմայի շուրջ բանավեճ, որը վարում է Արամ Աբրահամյանը, նույն թեմայով տեսանյութ, ինչպես նաեւ անդրադարձ շաբաթվա միջազգային կարեւոր իրադարձություններին: «Արտկանոնը» մշակութային հաղորդաշար է՝ նոր կանոններով, մշակույթի հանդեպ նոր հայացքով: Տաղավարում հյուրընկալվում են մշակույթի տարբեր ոլորտների (կինո, թատրոն, արվեստ, գրականություն, երաժշտություն) ճանաչված արվեստագետներ:

ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«ՀԱՅ ԱՍՊԵՏ»

Հեռուստամրցախաղ բառահանդես է, որտեղ վիճակահանությամբ ընտրված 3 դպրոցների 4-7-րդ դասարանների լավագույն աշակերտներից ձեւավորված թիմերը մրցում են հայագիտության բոլոր ոլորտներից իրենց գիտելիքներով (պատմություն, լեզու-գրականություն, բնություն եւ աշխարհագրություն, հայ արվեստի պատմություն, առասպելներ եւ ավանդություններ, երգ ու պար, վարվեցողության ազգային ավանդույթներ եւ այլն): Ամսվա առաջին երեք շաբաթների հաղթող թիմերը դառնում են «Հայ ասպետ» և վերջին շաբաթում մրցում միմյանց հետ՝ այսպիսով ընտրելով տվյալ ամսվա հաղթողին:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՆՔ ԵՆՔ»

Հանրային հեռուստաընկերության նոր հաղորդաշարի նպատակն է հեռուստադիտող երեխաներին հաղորդակից դարձնել Հայաստանի տեսարժան վայրերի եւ իրենց հասակակիցների հետ: Հաղորդաշարը կապ է ստեղծում մայրաքաղաքի եւ մարզերի երեխաների միջեւ, ծանոթանում նրանց հետաքրքրություններին եւ նախասիրություններին: Յուրաքանչյուր հաղորդման ընթացքում հաղորդավարներն այցելում են Հայաստանի որեւէ մարզ կամ գյուղ, ներկայացնում գեղեցիկ բնությունն ու պատմամշակութային եւ ճարտարապետական հետաքրքիր կոթողները: Այնուհետեւ հաղորդավարները հանդիպում են մարզի կամ գյուղի իրենց հասակակից երեխաների հետ, զրուցում են նրանց հետաքրքրությունների, զբաղմունքների մասին: Այցելում են տվյալ վայրի դպրոց կամ մշակույթի կենտրոններ, ծանոթանում երեխաների առօրյային՝ իրենց տարեկիցների օգնությամբ ներկայացնելով տվյալ տարածաշրջանի կոլորիտը:

«ԻՆՉՈՒՆԵՐԻ ՄՈԼՈՐԱԿ»

Հաղորդաշարը մանկապատանեկան ձևաչափով նոր նախագիծ է, որի ընթացքում երեխաները կգտնեն իրենց հուզող շատ հարցերի պատասխանները, նույնիսկ այնպիսի հարցերի, որոնց շուրջ դեռեւս չէին էլ մտածել: Գունեղ, բարի, ուրախ եւ ստեղծագործ մոլորակում հմուտ ձեռքեր ունեցող հաղորդավարները պատրաստում են զարմանալի իրեր, զվարճալի խաղալիքներ: «Ինչուների մոլորակը» նոր պատուհան է դեպի գիտելիքների անծայրածիր աշխարհ: Այդ մոլորակի հյուրընկալ դռները միշտ բաց են շնորհալի ու ստեղծագործ միտք ունեցող երեխաների առջեւ:

ԳԻՏԱԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՄՓԵՔՈՎ»

Հաղորդման ստեղծագործական խումբը, շրջելով Հայաստանի տարածքով, պատմում է քաղաքների, գյուղերի պատմաճարտարապետական հուշարձանների, ինչպես նաեւ մարդկային ինքնատիպ ճակատագրերի մասին: Հաղորդումը հետապնդում է ճանաչողականնպատակ՝հեռուստադիտողինՀայաստանըներկայացնելուհնարավորինս մանրամասն:

«ՕՏԱՐ. ԱՄԱՅԻ ՃԱՄՓԵՔԻ ՎՐԱ»

Ծրագիրը պատմում է տարբեր երկրների ու քաղաքների մասին, որտեղ ապրում են մեր հայրենակիցները՝ չմոռանալով նաեւ տվյալ երկրների տեսարժան վայրերն ու մշակութային արժեքները: Բացառիկ նկարահանումներ են կատարվել տարբեր երկրների թանգարաններում, տաճարներում, պալատներում եւ համալիրներում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՂՁՎԱԾՆԵՐԸ»

Ինչպես բոլոր հին քաղաքակրթական բնօրրաններում, այնպես էլ Հայաստանում առասպելի եւ իրականության սահմանները հաճախ հատվում են, եւ դժվար է լինում զատել ճշմարտությունը հորինվածքից: Ահա այդպիսի առեղծվածային խնդիրների բացահայտմանն է նվիրված Ստեփան Զաքարյանի հեղինակային հաղորդումը:

Բոլոր վիճահարույց խնդիրները հաղորդման ընթացքում վեր են հանվում բացառապես գիտության փաստարկված լեզվով. նոր, թարմ վարկածներն առաջ են քաշում միայն մասնագետները:

«ԱՆԾԱՆՈԹ ՀԱՅԱՍՏԱՆ»

Նոր հեռուստանախագիծը կրթական-ճանաչողական ֆիլմերի շարք է, որը փորձում է պատասխանել հայոց պատմությանը վերաբերող, դեռեւս անպատասխան մնացած հարցերին, բացահայտել Հայաստանի եւ հայերի հետ կապված անհայտ կամ քիչ ծանոթ պատմությունները եւ իրադարձությունները: Ֆիլմաշարը պատմում է մեզ ծանոթ եւ միեւնույն ժամանակ անծանոթ Հայաստանի մասին՝ հնարավորություն ստեղծելով այն ընկալել նոր տեսանկյունից:

«ՄԱՅՐԻԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ»

Հանրային հեռուստաընկերության ամենաբանիմաց մայրիկ Մերի Ներսիսյանն ուրախ, լուսավոր միջավայրում նորատի ու փորձառու մայրիկներին մատչելի լեզվով զինում է օգտակար տեղեկատվությամբ: Օգնում է կողմնորոշվել երեխաների խնամքի ու դաստիարակության հարցերում, ներկայացնում մայրաքաղաքում ու մարզերում գերիշխող սիրողական մոտեցումները: Հաղորդման ընթացքում ներկայացվում են կնոջ հղիության շրջանները, երեխայի կյանքի առաջին տարին եւ հետագա զարգացումը: Հաղորդաշարն ընդգրկում է նաև տեսանյութեր վերոհիշյալ թեմաներով:

«ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ»

Ի՞նչ է հայրենիքը, որտե՞ղ փնտրենք հայրենիքը. այս հարցերը հայության ֆիզիկական գոյության մասին չեն, այլ նրա ապագայի, նրա մշակութային ժառանգության, նրա հոգեկան ինքնության մասին, եւ այն մասին, որ շքեղ շենքերի հայրենիք չդարձնենք մեր հայրենիքը, այլ հոգու և մտքի հպարտությամբ ճոխացնենք այն, տենչանք ու աշխատենք



հոգեւոր Հայաստանի համար: Նյութական կորուստները միշտ կարելի է վերադարձնել, իսկ հոգեւոր կորուստն անդառնալի է: Հաղորդաշարի հիմնական թեմաները շոշափում են կարեւորագույն հարցեր՝ ինչ սյուների վրա է կառուցված հայրենիքը եւ ինչ սյուների վրա է շարունակում կառուցվել՝ աշխարհագրական, տնտեսական, պատմական, մշակութային:

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«ՇԱԽՄԱՏ 64»

«Շախմատ 64» հաղորդաշարը համակողմանիորեն լուսաբանում է շախմատի աշխարհում տեղի ունեցած բոլոր միջոցառումները: Մեկնաբանը նախ ներկայացնում է վերջին օրերին կայացած մրցաշարերի արդյունքները եւ տեղեկություն տալիս մեր մարզիկների մասնակցության մասին, ապա ընտրում է առավել հետաքրքիր պարտիաներից մեկն ու խաղատախտակին ցուցադրում այն: Այդ ընթացքում նա ոչ

միայն քայլերը կատարում է ըստ հերթականության, այլև փորձում է վերլուծել պարտիան, գտնել հնարավոր վրիպումները, մատնանշել ուժեղ քայլերն ու նորամուծությունները:

«ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀ»

Շախմատի մասին այս հաղորդումը ներկայացնում է շախմատային աշխարհի կարեւոր իրադարձությունները, հաղորդաշարի հյուրերի հետ քննարկում Հայաստանում շախմատային կարեւոր միջոցառումները եւ շախմատի զարգացման նախադրյալներն ու ուղղությունները, ներկայացնում հանրակրթական դպրոցներում

շախմատի՝ որպես ուսումնական առարկայի, դասավանդման արդյունավետության եւ շախմատային աշխարհի լավագույնների մասին պատմող տեսանյութեր ու սյուժեներ:

«ԼՐԱՑՈՒՑԻՉ ԺԱՄԱՆԱԿ»

Հաղորդաշարը ներկայացնում է ֆուտբոլային կյանքը, անցուդարձը, մութ ու խորհրդավոր պատմությունները: Պարբերաբար անդրադառնալով այս կամ այն ֆուտբոլային ակումբին՝ «Լրացուցիչ ժամանակը» փորձում է նպաստել հեռուստադիտող-ֆուտբոլային ակումբ կապի ամրապնդմանը:

Հաղորդաշարը բաղկացած է բացառիկ հարցազրույցներից ու ռեպորտաժներից, միջազգային ֆուտբոլի լայն անդրադարձից: «Լրացուցիչ ժամանակ» հաղորդման ընթացքում լուսաբանվում են շաբաթվա ամենահետաքրքիր դրվագները, գոլերն ու վրիպումները:

«ԽԱՂԻՑ ԴՈՒՐՍ»

Կարեն Գիլոյանի հեղինակային հաղորդումն ամեն շաբաթ ներկայացնում է սպորտային կյանքի նորությունները, հրատապ ու թեժ թեմաները: Հաղորդաշարը փորձում է բացահայտել բոլոր այն խնդիրները, որոնք առկա են հայկական սպորտային միջավայրում: Հաղորդմանը մասնակից հյուրերի հետ քննարկվում են ոլորտի խնդիրները, դրանց լուծման հավանական տարբերակներն ու արդյունավետ ելքերը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«ԵՐԳ ԵՐԳՈՑ»

Հաղորդաշարի թեման հայ երգն է՝ սկսած միջնադարյան տաղերից մինչեւ 80-ականների վերջի հեղինակային երգը, հաղորդավարը՝ Խորեն Լեւոնյանը: Առանձին հաղորդումներ են նվիրվում հայ անվանի կոմպոզիտորներին եւ նրանց ստեղծագործություններին, զանազան հոբելյանական առիթներով հնչում են սիրված երգեր: Հանրապետության շնորհալի երգիչների կատարումներին զուգահեռ, հատուկ պատրաստված ժամանակագրական տեսաֆիլմերով ներկայացվում է տվյալ երգի կամ հեղինակի ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական եւ տնտեսական համատեքստը՝ հաղորդումը օժտելով նաեւ ճանաչողական ոչ պակաս կարեւոր գործառույթով:

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓՈՍՏԱՐԿԴ»

Հաղորդավար Սուսաննա Շահինյանը մեկ առ մեկ ընթերցում է բոլոր նամակ-պատվերները եւ դրանցից ընտրում լավագույնները, որոնք բարձրացնում են մարդկանց տրամադրությունը: Հաղորդումների ընթացքում մատուցվում են բազմաժանր ու բազմազան երգեր՝ դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական եւ արտասահմանյան էստրադային, հեղինակային եւ շատ ու շատ հին ու նոր ստեղծագործություններ:

ՇՎԱՐՃԱԼԻ. ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

«ՄԵՐ ՄԵՑ ԱՍԱՑ»

Հեռուստանախագծի ընթացքում տաղավարում հյուրընկալվում են հանրությանը հայտնի կամ անհայտ մարդիկ, ներկայացնում իրենց կյանքի ամենահետաքրքիր ու շրջադարձային դրվագներից մեկը: Ամեն անգամ ճանաչված մարդիկ ներկայանում են նորովի՝ պատմելով այն, ինչի մասին դեռ ոչ մի տեղ չի խոսվել: Տաղավարում հյուրերը միշտ անկեղծ են եւ անմիջական:

«ՃԱԿԱՏԱԳՐԵՐ. ՕՎԿԻԱՆՈՍԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ»

«Ճակատագրով՝ կին» հաղորդաշարի ստեղծագործական խումբը ներկայացնում է նոր հեռուստաշարք Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Հաղորդման հերոսները օվկիանոսից այն կողմ ապրող մեր հայրենակիցներն են՝ դերասաններ, նկարիչներ, երաժիշտներ, երգիչներ, գործարարներ և այլն:

Ի՞նչն է տարել նրանց հայրենիքից հեռու, ինչպե՞ս են հաղթահարել օտար երկրում հաստատվելու բարդությունները, ինչպե՞ս է դասավորվել նրանց անձնական ու մասնագիտական կյանքը, ի՞նչն է մտահոգում եւ ուրախացնում նրանց այսօր: Այս հարցերի պատասխանները հանդիպումների շարքով ներկայացնում է հաղորդման հեղինակ եւ վարող Աննա Ավանեսյանը:

«ԳՈՒՇԱԿԻՐ ՄԵՂԵԴԻՆ»

Նոր զվարճալի-ժաման-ցային հաղորդաշարը հեռուստադիտողներին հնարավորություն է տալիս մաս կազմելու երաժշտական հեռուստանախագծին, ստուգելու իրենց երաժշտական գիտելիքները եւ հետեւելու հայտնի երգիչների, դերասանների, հասարակական գործիչների խաղին: Աշխատանքային օրերի ավարտին Ավետ Բարսեղյանը սիրելի ու գուցե երբեմն մոռացված մեղեդիների օգնությամբ լիցքավորում է դրական ու ջերմացնող էներգիայով:

«ԸՆՏԱՆՅՈՒՔ ՀԱՆԴԵՐՁ»

Նոր կատակերգական բազմասերիանոց ֆիլմի իրադարձությունները ծավալվում են Երեւանում բնակվող Սանայանների ընտանիքում: Ընտանիքի միակ տղամարդը՝ Դավիթը, դեռ ամուսնացած չէ: Այդ հանգամանքը հանգիստ չի տալիս նրա մայրիկին՝

Աիդային եւ մորաքրոջը՝ Նազիկին: Նրանք համապատասխան հարսնացու են փնտրում Դավիթի համար, երբ հանկարծ պարզում են, որ նա արդեն ինքնուրույն ընտրել է իր ապագա կնոջը՝ Մարիին...

«ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ»

16 մասից բաղկացած «Հատուկ բաժին» դետեկտիվ ժանրի նոր բազմասերիանոց հեռուստաֆիլմի գործող անձինք ոստիկանության համակարգում ստեղծված օպերատիվ-քրեագիտական հատուկ բաժնի աշխատակիցներն են, իսկ սյուժեի հիմքում՝ առավել բարդ, ծանրագույն եւ հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունները: Նորագույն տեխնիկական եւ լաբորատոր սարքավորումներով համալրված բաժինը հնարավորություն ունի կատարելու ցանկացած քրեագիտական հետազոտություն: Բաժնում աշխատում են համակարգի լավագույն մասնագետները, որոնք իրենց գործի նվիրյալներ են: Ֆիլմը նպատակ ունի հանրությանը ներկայացնելու ՀՀ ոստիկանության պատասխանատու գործունեությունը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԸ»

Հեռուստանախագիծը ներկայացնում է հայկական ազգային խոհանոցի ամբողջ հարստությունը, ավանդական ուտեստների պատրաստման ընթացքն ու հային բնորոշ հյուրասիրությունը: Նոր ձեւաչափով բացահայտվում է մեր խոհանոցային գաղտնիքներն ու ազգային առանձնահատկությունները, հայկական լեռնաշխարհի անսահման

գեղեցկությունն ու էկոտուրիզմի արդի հնարավորությունները: Նոր հաղորդաշարը միտում ունի պահպանելու ու զարգացնելու դարերի խորքից եկած հայկական խոհարարական ավանդույթները ոչ միայն Հայաստանում, այլեւ դրա սահմաններից դուրս:

2015 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է արտասահմանյան ֆիլմերի ընտրության հատուկ քաղաքականությունը՝ հեռուստադիտողներին ներկայացնելով իսկապես որակյալ, ուսուցողական ֆիլմեր: Փեռք բերված ֆիլմերը թարգմանվել եւ կրկնօրինակվել են հայերեն՝ այդպիսով հասանելի դառնալով Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու՝ անկախ տարիքից, բնակության վայրից եւ կրթվածության աստիճանից:

Շարունակվել են քայլեր ձեռնարկվել Հանրային հեռուստաընկերության ձայնային բազայի համալրման ուղղությամբ՝ ֆիլմերի կրկնօրինակման եւ հնչյունավորման աշխատանքների որակը հնարավորինս լավացնելու համար:

Մեծ ուշադրություն է դարձվել նաեւ հայկական ֆիլմերի ներկայացմանը՝ նոր սերնդին հնարավորություն տալով ծանոթանալու հայկական ֆիլմարտադրության ավանդույթներին եւ պատմությանը:

Հանրային հեռուստաընկերությունը 2015 թվականին շարունակել է ակտիվորեն համագործակցել եւ որակական նոր աստիճանի վրա դնել շփումները Եվրոպական հեռարձակողների միության հետ, որը հնարավորություն է տալիս Առաջին ալիքի հեռուստադիտողներին հաղորդակից դառնալ միջազգային ամենակարեւոր իրադարձություններին՝ ինչպես մշակութային, այնպես էլ մարզական:

Եվրոպական հեռարձակողների միության հետ ակտիվ համագործակցության արդյունքում արդեն 9 տարի շարունակ Հանրային հեռուստաընկերությունը ապահովում է մասնակցություն միջազգային ամենահայտնի երաժշտական մրցույթին՝ «Եվրատեսիլ»-ին, ինչպես նաեւ «Մանկական եվրատեսիլ»-ին:

Հանրային հեռուստաընկերության եթերում ներկայացվեցին դասական միջազգային համերգներ, օպերաներ:

Ժամանակակից ֆիլմարտադրության միտումները հայ հեռուստադիտողին ներկայացնելու հարցում օգնեց Առաջին ալիքի համագործակցությունը միջազգային ֆիլմարտադրող ամենահայտնի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Paramount Pictures», «20th Century Fox International», «Universal», «MGM», «Globo TV», «Miramax», «Sony», «Disney» եւ այլ ընկերությունները:

Ակտիվ է եղել նաեւ միջազգային համագործակցությունը սպորտի բնագավառում: 2015 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակել է Ըմբշամարտի եւ Ծանրամարտի եվրոպայի եւ աշխարհի առաջնությունները, Ֆուտբոլի Եվրո-2016-ի ընտրական փուլի հանդիպումները, ինչպես նաեւ Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի մասնակցությամբ Ֆուտբոլի եվրոպայի առաջնության ընտրական խաղերը:

Ժամանակակից պահանջներին համապատասխանող հեռուստաընկերություն ունենալու համար միայն անսահման նվիրումը, ստեղծագործական միտքը, հետաքրքիր գաղափարները բավական չեն: Այդ ամենը լավ եւ որակով հեռուստադիտողին ներկայացնելու համար տեխնիկական լավ հնարավորություններ, անհրաժեշտ տեխնիկական հագեցածություն է պետք:

Հեռուստաեթերի բովանդակային փոփոխություններին զուգընթաց, 2015 թվականին եւս շարունակվեցին անհրաժեշտ քայլել ձեռնարկվել տեխնիկական որակի բարձրացմանը միտված:

Այս համատեքստում գլխավոր ձեռքբերումը Հանրային հեռուստաընկերության նոր հեռուստաշարժակայանն է: Չինաստանի կառավարության կողմից Հայաստանին հատկացվող ամենամյա անհատույց օգնության շրջանակում Հանրային հեռուստաընկերությանը նոր, ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան 10 տեսախցիկով զինված HD շարժական հեռուստատեսային կայանը եւ HD արբանյակային հեռարձակման կայանը: Վերոնշյալ 10 տեսախցիկներից մեկը հեռակառավարվող է, իսկ մյուսը հնարավորություն է տալիս դանդաղեցված նկարահանումներ իրականացնել: Նոր շարժակայանն ունի նաեւ եթերի գրաֆիկական ձեւավորման համակարգ: Այն հնարավորություն է տալիս միջազգային ստանդարտներին համապատասխան կերպով, լավագույնս նկարահանել մարզական եւ մշակութային համապետական միջոցառումները: Իսկ ահա HD արբանյակային հեռարձակման կայանը հնարավորություն է տալիս Լրատվական թողարկումներ հեռարձակել Հանրապետության ցանկացած վայրից:

Չինաստանի կառավարության հետ համագործակցության արդյունքում հնարավորություն ստեղծվեց 2015 թվականին կառուցել նոր եթերային եւ ապարատային սարքաստրահ, որը թույլ կտա առաջիկայում անցում կատարել HD հեռարձակման: Նոր եթերայինը հնարավորություն կտա աշխատել երկու ալիքի վրա միաժամանակ՝ ինչպես տեղական, այնպես էլ արբանյակային, ապահովել եթերի գրաֆիկական ձեւավորումը:

Հանրային հեռուստաընկերության համար տարիներ շարունակ գերխնդիր է եղել արխիվի պահպանման եւ թվայնացման հարցը: Հեռուստաընկերությունը տարբեր կրիչների վրա՝ մասնավորապես տեսաժապավենների, տեսասկավառակների, կոշտ սկավառակների վրա ունի հարուստ արխիվ, որը մշակման, կանոնակարգման եւ թվայնացման լուրջ կարիք ունի: Այս համատեքստում կարեւորելով արխիվային նյութերի պահպանման հարցը՝ նոր թափով սկսվել է տարբեր կրիչների վրա գտնվող Հանրային հեռուստաընկերության եւ նախկին Երեւան կինոստուդիայի արխիվային նյութերի քիմիական մշակման եւ թվայնացման գործընթացը: Բացի այդ, զուգահեռաբար սկսվեց ձեւավորվել արխիվային նյութերի տվյալների համակարգված բազա, որոնման հատուկ համակարգ, ինչը հնարավորություն է տալիս Հեռուստաընկերությանը լիարժեքորեն օգտվել արխիվային հարստությունից, ինչպես նաեւ, ըստ անհրաժեշտության, հասանելի դարձնել նաեւ հանրությանը:

2015 թ-ին ընդլայնվել է հանրային ալիքների հեռարձակման տարածքը՝ հասանելի լինելով Հայաստանի եւ Արցախի բոլոր անկյուններում, ինչպես նաեւ եվրոպական երկրներում, Մերձավոր Արեւելքում եւ Հյուսիսային Ամերիկայում՝ միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:

Իսկ ահա պաշտոնական վեբ կայքի (www.1tv.am) միջոցով հնարավոր է դարձել հաղորդումների համաժամանակյա դիտումը ամբողջ աշխարհում: Ներկայումս Հանրային հեռուստաընկերության եթերին կարելի է հետևել ինչպես անհատական համակարգչով, այնպես էլ բջջային հեռախոսներով եւ պլանշետներով: Ստեղծվել են հավելվածներ (Application) հանրածանոթ IOS եւ Android համակարգերի համար, որոնք կարելի է ներբեռնել անվճար: Կայքը հնարավորություն է տալիս նաեւ առցանց դիտել արդեն հեռարձակված եւ արխիվացված հեռուստահաղորդումները՝ հեղինակային եւ հեռարձակման իրավունքների խիստ պաշտպանությամբ:



Բացի վերոնշյալ ստեղծագործական եւ տեխնիկական փոփոխություններից, կարեւորվել է նաեւ Ընկերության աշխատակիցների հարմարավետության, ինչպես նաեւ շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը:

Վերակառուցվել, վերանորոգվել եւ շահագործվում է «Երեւան ստուդիա» մասնաշենքի մի մասը՝ ,Առաջին լրատվական ծառայության աշխատակազմի եւ նոր անցակետի տեղակայման նպատակով:

Ստեղծագործական տնօրինության աշխատակիցներին մի մասնաշենքում տեղակայելու եւ աշխատանքները համակարգված իրականացնելու նպատակով՝ վերակառուցվել եւ վերանորոգվել է Հեռուստաընկերության ԱՍԲ 6 մասնաշենքը: Վերանորոգվել է նաեւ 3-րդ կարգի վթարայնության աստիճան ունեցող ԾՀԿ մասնաշենքը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտ պայմաններում պահել Հանրայինի շարժական հեռուստակայանները: Այն վերազինվել է հակահրդեհային հատուկ համակարգով:

Աշխատակիցների հարմարավետություն ապահովելու, ինչպես նաեւ Հեռուստաընկերության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կառուցվել է ճաշարան-սրճարան, ծխարան:

Դուրս են գրվել Ընկերությանը պատկանող, սակայն ոչ պիտանի, դուրս գրման (ոչնչացման կամ օտարման) ենթակա մոտ 5000 անվանում հիմնական միջոցներ: Դրա արդյունքում ձեռք են բերվել 11 նոր մեքենաներ:

Բարեկարգվել եւ ասֆալտապատվել է Ընկերության տարածքը, գործարկվել է նոր ավտոկայանատեղի (շուրջ 200 մեքենայի համար), վերանորոգվել է արտաքին լուսավորության համակարգը, բարեկարգվել են կանաչապատ տարածքները:

Հանրային հեռուստաընկերությունը 2015 թվականին իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, միջազգային ալիքի առեւտրային եւ Առաջին ալիքի սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ընթացքում հովանավորչությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային եւ տեսաձայնաշարային նյութերի վաճառքից եւ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև տեխնիկական վերազինման և շենք-շինությունների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է՝

- 08.03.01.02 «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով՝ 4,719,289.4 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.11 «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգումե ծրագրով՝ 135,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով),
- 08.03.01.13 «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինումե ծրագրով՝ 208,989.6 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

2015 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից այլ աղբյուրներից ստացված եկամուտները կազմել են 733,163.0 հազ. դրամ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության կողմից 2015 թվականին ստացված եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 4

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

(հազ. դրամ)

Հ/Հ	ԵԿԱՄՏԻ ՏԵՍԱԿ	ԳՈՒՄԱՐ
1	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ	4.719.289
2	ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ	437.494
3	ԱՅԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ	170.000
4	ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ. ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	563.164
4.1	«ԱՌԱՑԻՆ» ԱԼԻԲԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ. ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ՄԻՑԱԶԳԱՅԻՆ ԱԼԻԲԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՎԱԶԴ	339.979
4.2	ՖԻԼՄԵՐԻ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏ	170.004
4.3	ՀԵՌԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԵՌԱՐԱԿՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ	34.414
4.4	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	18.767
5	ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ	14.290
ԸՆԴԱՄԵՆԸ		5.904.237

Աղյուսակ 4-ի ,Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտե տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից ստացված կապիտալ դրամաշնորհի հաշվին ձեռք բերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2015 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Աղյուսակ 5-ում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2015 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 5

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(հազ. դրամ)

Հ/Հ	ԾԱԽՍԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԳՈՒՄԱՐ
1	ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ. ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1.494.857
2	ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ. ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՖԻԼՄԵՐԻ ՀԵՌԱՐԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	1.867.392
3	ՀԵՌԱՐԱԿՄԱՆ ԾԱԽՍԵՐ	496.671
4	ՄԱՐԿԱԾՔ ԵՎ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ	632.213
5	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	659.376
ԸՆԴԱՄԵՆԸ		5.150.509

Աշխատավարձերի, հավելավճարների և այլ վարձատրությունների գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 29.0%-ը և ներառել են հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև մարզային և արտերկրի թղթակիցների վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 36.3%-ը և ներառել են հեռուստահաղորդումների ձեռքբերման, հեռուստահաղորդումների, ֆիլմերի և տարբեր նշանակալից սպորտային ու մշակութային միջոցառումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, ինչպես նաև հաղորդումների ստեղծագործական խմբերի և կրկնօրինակման ծառայությունների վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 9.6%-ը և ներառել են ՀՀ տարածքում մետրային և արբանյակային կապուղով արտերկրում հեռարձակման ծախսերը, ինչպես նաև ինտերնետային կապուղով առցանց հեռարձակման ծախսերը:

Մաշվածքի և ամորտիզացիայի գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 12.3%-ը և ներառել են Ընկերության շենքերի և շինությունների, ինչպես նաև ձեռքբերված հիմնական միջոցների և արտադրական նշանակության ծրագրային միջոցների ամորտիզացիայի ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 12.8%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման, տրանսպորտային միջոցների շահագործման, արտագերատեսչական պահպանության, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, ներկայացուցչական, աուդիտի, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ շահութահարկի և հետաձգված հարկերի գծով ծախսերը), ինչպես նաև զուտ ֆինանսական ծախսերը:

2015 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում զուտ շահույթը կազմել է 753,728.0 հազ. դրամ:

2015 թվականի գործունեության ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարել 556,109.0 հազ. դրամ:

Հանրային հեռուստաընկերությունը 2015 թվականի ընթացքում ձեռք է բերել 296,396.0 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ նյութական և ոչ նյութական ակտիվներ, մասնավորապես հեռուստատեսային և համակարգչային տեխնիկա, եթերային սարքասարահի օդորակման համակարգեր, դիզելային գեներատոր, արտատաղավարային նկարահանումների ապահովման նպատակով տրանսպորտային միջոցներ, հեռուստատեսային տեխնիկայի ծրագրային լիցենզիաներ, ինտերնետային կայքի տեխնիկական արդիականացման ծախսեր և այլն: Ավելին, ՀՀ Կառավարության և Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության միջև կնքված տեխնիկատնտեսական համագործակցության շրջանակներում Հանրային հեռուստաընկերությունը 2015 թվականին դրամաշնորհի տեսքով ստացել է տեխնիկապես 3,233,735 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ վերազինված շարժական հեռուստակայան իր օժանդակ մեքենայով, իսկ Եվրոպական հեռարձակողների միության անդամակցության շրջանակներում անհատույց ստացել է 78,160 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ արբանյակային ազդանշանի ընդունման ժամանակակից տեխնիկական սարքավորումներ:

2015 թվականին ՀՀ պետական բյուջեից տեխնիկական վերազինման նպատակով ստացված 208,989.9 հազ. դրամ կապիտալ դրամաշնորհի միջոցներից 53,501.0 հազ. դրամը Հանրային հեռուստաընկերությունն ուղղել է 2014 թվականին արտադրական նշանակության համակարգչային տեխնիկայի ծախսերի փոխհատուցմանը, 86,962.0 հազ. դրամը՝ 2015 թվականին հեռուստատեսային տեխնիկայի ձեռքբերմանը, 42,479.0 հազ. դրամը՝ արտադրական նշանակության համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանը, իսկ 26,047.9 հազ. դրամը՝ հեռուստատեսային կարիքների համար այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերմանը:

2015 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շենքերի և շինությունների հիմնանորոգման նպատակով իրականացրել է 245,611.0 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժեքով շինարարական աշխատանքներ (դեկորացիաների պահպանման պահեստ-մասնաշենքի և վերգետնյա անցման նորոգման աշխատանքներ, գլխավոր մասնաշենքի երկրորդ հարկում գտնվող եթերային սարքասրահի վերանորոգման աշխատանքներ, ՇՀԿ ադմինիստրատիվ շենքի ուժեղացման և վերակառուցման աշխատանքներ, «Երևան ստուդիա» մասնաշենքի աջակողմյան հատվածի ուժեղացման և վերակառուցման աշխատանքներ, գլխավոր մասնաշենքի երկրորդ և երրորդ հարկերի ճակատային հատվածների, երրորդ հարկի ետնամասի ու կից միջանցքի նորոգման աշխատանքներ, նկուղային հարկի աշխատասենյակների և կից միջանցքի նորոգման աշխատանքներ և այլն), որից 135,000.0 հազ. դրամը իրականացվել է ՀՀ պետական բյուջեից շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցների հաշվին, իսկ 110,611 հազ. դրամը՝ 2015 թվականի ընթացքում ներգրավված հավելյալ եկամուտների հաշվին:

Տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գործընթացը շարունակական բնույթ է կրում և յուրաքանչյուր տարի Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է իրականացնել տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման աշխատանքներ՝ հաշվի առնելով վերոհիշյալ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

1

2015 թվականն